ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍԱՖԱՐՅԱՆ ԴԱՎԻԹ ԱՐԱՄԻ

ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐՏԱՅՈԼՈՒՄԸ ՆԵՐԹՈՒՐՔԱԿԱՆ ԴԻՄԿՈՒՐՍՈՒՄ (2001-2011 ԹԹ.)

Է 00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2015

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Ռ. Ա. Սաֆրաստյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ.գ.դ., պրոֆեսոր
Ա. Գ. Ավագյան

պ.գ.թ. Ա. Լ. Անանյան

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2015 թ., հունիսի 12-ին, ժամը 15.00-ին, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի 006 մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0019 Երևան, Մարշալ Բաղրամյան պ., 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015 թ. մայիսի 11-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար պ.գ.թ, դոցենտ Ռ.Պ. Ղազարյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումն առանձնակի նշանակություն ունի տարածաշրջանային անվտանգության ապահովման համատեքստում: Թուրքիայի և Հայաստանի միջև դիվանագիտական հարաբերությունների բացակայությունը և փակ սահմանները լարվածության գործոն են հանդիսանում, արգելափակում են տարածաշրջանի տնտեսական զարգացումը: «Արդարություն և զարգացում» կուսակցության (այսուհետ՝ ԱԶԿ) իշխանության առաջին տասնամյակի (2002-2011 թթ.) շրջանում ՀՀ-ի նկատմամբ վարած քաղաքականության և թուրքական հասարակական-քաղաքական դիսկուրսում (քննույթում/խոսույթում) դրա արտացոլման ուսումնասիրությունը արդիական նշանակություն ունի՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԱԶԿ-ը շարունակում է մնալ իշխող ուժ: Նրա վարած արտաքին քաղաքականության ուսումնասիրությունը կարևոր է Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական գծի մշակման և առկա մարտահրավերներին համարժեք պատասխաններ տալու համար՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ Թուրքիան, ինչպես նաև թուրք-ադրբեջանական ռազմա-քաղաքական դաշինքն անմիջական գործոններ են ՀՀ-ի և ԼՂՀ-ի ազգային անվտանգության համակարգի ձևավորման համատեքստում:

Ատենախոսության նպատակը և խնդիրները: Աշխատության նպատակն է համակողմանիորեն ուսումնասիրել ու վերլուծել ԱԶԿ կառավարման առաջին երկու շրջաններում (2002-2007, 2007-2011 թթ.) Հայաստանի նկատմամբ Թուրքիայի վարած քաղաքականությունը, բացահայտել այդ քաղաքականության մեջ առկա նոր մոտեցումները, ցույց տալ այն հիմնահարցերը, որտեղ հետևողականորեն շարունակվել է նախորդ կառավարությունների որդեգրած գիծը: Ուսումնասիրման առարկա են նաև այդ քաղաքականության արձագանքներն ու գնահատականները ներթուրքական քաղաքական ու հասարակական քննարկումներում: Մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները.

- ներկայացնել հայ-թուրքական հարաբերությունների վիճակը մինչև 2002 թ. (հիմնախնդիրներ և հարցեր, որոնցով պայմանավորվում է պաշտոնական հարաբերությունների բացակայությունը և սահմանների փակ լինելը),
- բացահայտել ԱԶԿ-ի իշխանության շրջանին բնորոշ նոր երևույթներն ու մոտեցումները թուրքական քաղաքականության մեջ ու վերլուծել դրանց դրսևորումները,
- դիտարկել հայ-թուրքական տնտեսական հարաբերությունները պաշտոնական հարաբերությունների բացակայության և փակ սահմանների պայմաններում,
- անդրադառնալ Հայոց ցեղասպանության հարցում ԱԶԿ-ի որդեգրած քաղաքականությանը և փորձերին՝ հարցը տեղափոխել պատմական քննարկումների հարթություն,
- ներկայացնել հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման վերաբերյալ ներթուրքական դիսկուրսը,

- դիտարկել Թուրքիայի փորձերը՝ Հարավային Կովկասում ավելի մեծ քաղաքական դերակատարություն ստանձնելու նպատակով Կովկասյան պլատֆորմի ստեղծման ուղղությամբ,

- բացահայտել Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման փորձերի տարբեր փուլերում ի հայտ եկած «արտաքին» կամ «ածանցյալ» գործընթացները և գործոնները (ԱՄՆ, ԵՄ, Ադրբեջան, Ռուսաստան), որոնք որոշակի ազդեցություն ունեցան կողմերի դիրքորոշումների և բանակցությունների արդյունքների վրա,

- դիտարկել և գնահատել «ֆուտբոլային դիվանագիտության» գործընթացը, Ցյուրիխում ստորագրված հայ-թուրքական արձանագրությունները, ինչպես նաև Թուրքիայի և Հայաստանի հասարակական-քաղաքական դաշտերի վերաբերմունքը դրանց նկատմամբ,

- վերլուծել ԱԶԿ-ի «հայկական նախաձեռնության» ձախողման պատճառները:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսությունն առաջին փորձն է հնարավորինս ամբողջական ու համակողմանիորեն ներկայացնել Թուրքիայի իշխանությունների, մասնավորապես, ԱԶԿ-ի՝ Հայաստանի նկատմամբ վարած արտաքին քաղաքականության առանձնահատկությունները իշխանավարման առաջին երկու փուլերում՝ միաժամանակ դիտարկելով այդ քաղաքականության արտացոլումը ներթուրքական հասարակական-քաղաքական քննարկումների դաշտում: Ի մի են բերված Թուրքիայի հասարակական-քաղաքական և գիտական-վերլուծական դաշտում առկա մոտեցումներն ու դիրքորոշումները, մասնավորապես, պետության ղեկավարների, քաղաքական գործիչների, դիվանագետների, վերլուծաբան-հետազոտողների, լրագրողների, հրապարակախոսների և հասարակական շրջանակների ներկայացուցիչների հայտարարություններն ու տեսակետները, որոնք մեր կողմից արված մշտադիտարկման արդյունքում գնահատվել են իբրև առավել ուշագրավ, դիպուկ, քաղաքական ուղեգծի մշակման ընթացքում առավել ազդեցիկ և գիտահետազոտական արժեք ունեցող:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը: Ատենախոսության մեթոդաբանական հիմքը պատմահամեմատական մեթոդն է, ինչպես նաև աղբյուրների և նյութերի համադրման, քննական վերլուծության մոտեցումը: Ատենախոսությունը գրելիս օրտագործվել են նաև պատմագիտական ուսումնասիրման ընդհանուր՝ ժամանակագրական և պատմական պարբերացման մեթոդները:

Ատենախոսության ժամանակագրական սահմանները: Ժամանակագրական առումով ատենախոսությունն ընդգրկում է ԱԶԿ կառավարման երկու փուլերը (2002-2007թթ. և 2007-2011 թթ.), դրա նախօրեից սկսած՝ մինչև այդ կուսակցության երրորդ հաղթանակը 2011 թ. խորհրդարանական ընտրություններում: Կարևոր է, որ վերոհիշյալ ժամանակահատվածում Թուրքիա-Հայաստան հարաբերությունների ողջ համալիրի և ներթուրքական դիսկուրսում դրա արտահայտման թեմատիկան ուսումնասիրվել և գնահատվել է նախորդ տասնամյակի իրադարձությունների և թուրքական հասարակական-քաղաքական ընկալումների համեմատական քննության

հիման վրա: Ժամանակագրական վերոհիշյալ կտրվածքը հնարավորություն է տվել համեմատական վերլուծություն կատարել Թուրքիայի՝ Հայաստանի նկատմամբ քաղաքական կուրսի պարբերական ելևեջումների ճշգրտման և դրանց պատճառների վերաբերյալ:

Ատենախոսության կիրառական նշանակությունը: Գիտականից բացի ատենախոսությունն ունի նաև գործնական նշանակություն ՀՀ-ի արտաքին քաղաքականությամբ զբաղվող շրջանակների համար: Ատենախոսության մեջ արված եզրակացությունները կարող են օգտակար լինել հայ-թուրքական հնարավոր բանակցությունների գործընթացում հետագա կանխատեսումներ և քայլեր անելու համար: Ատենախոսության դրույթները կարող են օգտագործվել ՀՀ բուհերում Թուրքիայի նորագույն շրջանի պատմության դասավանդման, համապատասխան ուսումնամեթոդական ձեռնարկների ստեղծման գործընթացում: Ատենախոսության դրույթներն ու եզրակացությունները կարող են օգտակար լինել պատմաբանների, միջազգայնագետների, արևելագետների, հայ-թուրքական հարաբերությունները լուսաբանող լրագրողների համար:

Աշխատանքի փորձաքննությունը: Աշխատանքի հիմնական դրույթներն ու եզրակացությունները քննարկվել են ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնում, ներկայացվել են ատենախոսի կողմից հրատարակված հինգ գիտական հոդվածներում, ինչպես նաև գիտաժողովներում և սեմինար-քննարկումներում:

Օգտագործված աղբյուրների և գրականության համառոտ տեսություն:

Ատենախոսությունը գրելիս իբրև սկզբնաղբյուրներ օգտագործվել են Հայաստանի Հանրապետության նախագահների[1] և ՀՀ արտաքին գործերի նախարարների[2] հայտարարությունները, հարցազրույցները, ՀՀ Նախագահի և ՀՀ Արտաքին գործերի նախարարության պաշտոնական կայքերի տեղեկատվությունը: Օգտագործվել են Թուրքիայի Հանրապետության նախագահների, վարչապետների, արտաքին գործերի նախարարների, դեսպանների և այլ քաղաքական գործիչների ու դիվանագետների արտահայտած պաշտոնական դիրքորոշումներն ու տեսակետները: Մասնավորապես,

---

[1]Մասնավորապես, տե՛ս Նախագահ **Սերժ Սարգսյանի** խոսքը Բրիտանիայի միջազգային հարաբերությունների թագավորական ինստիտուտում, 10.02.2010, www.president.am, Նախագահ **Ս. Սարգսյանի** աշխատանքային այցը Ամերիկայի Միացյալ Նահանգներ, 12.04.2010, www.president.am, ՀՀ Նախագահ **Ս. Սարգսյանի** խոսքը Վաշինգտոնի մայր տաճարում Վուդրո Վիլսոնի գերեզման այցելությունից հետո, 12.04.2010, www.president.am, Նախագահ **Ս. Սարգսյանի** աշխատանքային այցը Մոսկվա 20.04.2010, www.president.am, Նախագահ **Ս. Սարգսյանի** հեռուստաուղերձը Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացի վերաբերյալ, 22.04.2010, www.president.am:

[2]ՀՀ ԱԳՆ 2008, 2009, 2010 և 2011 թթ. հաշվետվությունները, http://mfa.am/hy/annualreport/ http://mfa.am/u_files/20091013_protocol.pdf, ՀՀ ԱԳՆ, Մերձավոր և Միջին Արևելքի վարչություն, Թուրքիայի բաժին, Հայաստան-Թուրքիա, ժամանակագրություն, Հայաստան-Թուրքիա. բաց խոսակցություն, Հասարակական երկխոսության և զարգացումների կենտրոն, Երևան 2005:

Հայաստանի նկատմամբ Թուրքիայի վարած քաղաքականության միտումները և հիմնավորումները ներկայացնելու համար կարևոր են երկրի պետական բարձրաստիճան պաշտոնյաների՝ նախագահ Աբդուլլահ Գյուլի, վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի, արտգործնախարարների, պետական բարձրաստիճան պաշտոնյաների, դիվանագետների և զինվորականների, 2002 թ. երկրի քաղաքական ղեկը ստանձնած ԱԶԿ ղեկավար գործիչների մոտեցումների մասին վկայող հայտարարությունները և հրապարակային ասույթները[3]: Թուրքիայի նոր արտաքին քաղաքականության գաղափարախոսական-հենքային մոտեցումները հասկանալու համար օգտագործվել են Ահմեթ Դավութօղլուի այդ հարցին նվիրված տեսական աշխատությունները[4]: Այդ նյութերի օգտագործումը հնարավորություն է տվել վերլուծելու և իմաստավորելու երկու երկրների ղեկավարների և քաղաքական վերնախավերի ակնառու ներկայացուցիչների մոտեցումները տարածաշրջանում քաղաքական գործընթացների զարգացման հարցում, հասկանալու երկկողմ հարաբերությունների կարգավորման հնարավորությունների նրանց տեսլականը: Այդ նպատակով են օգտագործվել նաև թուրքական և հայկական մամուլում տպագրված հարցազրույցները նրանց հետ:

Ատենախոսության մեջ որպես սկզբնաղբյուր օգտագործվել են թուրքական ԶԼՄ-ների տարաբնույթ հրապարակումները. Հայաստանին և «Հայկական հարցին» հետազոտության շրջանում անդրադարձել են գրեթե բոլոր խոշոր թուրքական («Միլլիյեթ», «Հյուրիյեթ», «Սաբահ», «Զաման», «Թարաֆ», «Սի-էն-էն-Թուրք» թուրքերեն և «Թուրքիշ Դեյլի Նյուզ» անգլերեն և այլ) լրատվամիջոցները: Թուրքական հասարակական կարծիքի վրա զգալի ազդեցություն են գործել ճանաչված լրագրող, վերլուծաբան և հեռուստամեկնաբան Մեհմեդ Ալի Բիրանդի[5] հրապարակումները: Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման փորձերի նկատմամբ թուրքական հասարակական-քաղաքական հետաքրքրության հիշարժան

---

[3]Մասնավորապես, տե՛ս Interview transcript: Abdullah Gul, “Financial Times”, 08.04.2009, http://www.ft.com/intl/cms/s/0/47991556-2446-11de-9a01-00144feabdc0.html, **Давутоглу А.**, "Если вопрос Карабаха будет решен, армяно-турецкие отношения будут урегулированы", 07.07.2010, http://az.salamnews.org/ru/news/read/11008/axmed-davutoglu-esli-vopros-karabaxa-budet-reshen-armyano-tureckie-otnosheniya-budut-uregulirovani, **Давутоглу А.**, существующие проблемы помешали урегулированию армяно-турецких отношений, 01.25.2011, http://ru.1in.am/2429.html

[4]**Davutoğlu A.**, Turkey’s Foreign Policy Vision: An Assessment of 2007*, http://arsiv.setav.org /ups/dosya/9595.pdf, **Davutoğlu A.**, Stratejik Derinlik, Turkiye'nin Uluslararası Konumu, İstanbul, Kure Yayınları, Altmışdördüncü Basım, Istanbul, 2011.

[5]Մասնավորապես, տե՛ս **Birand M.A.**, Gül, maça gitmekle doğru adım attı, 05.09.08, http://www.hurriyet.com.tr/yazarlar/9824710.asp, **Birand M.A.**, Gül, bir tabu yıktı..., 09.09.08, http://www.hurriyet.com.tr/yazarlar/9851895.asp::

դրսևորումներ են հրատարակիչ և իրավապաշտպան Ռազբի Զարաքոլուի[6], պատմաբան Թաներ Աքչամի[7], իրավապաշտպան Էրեն Քեսքինի[8], լրագրողներ Հասան Ջեմալի[9], Մելչուք Գյուլթաշլըի[10], Ահմեթ Ալթանի[11], Ջենգիզ Չանդարի[12], Մանսուր Չելիքի[13], Մեհմեթ Ալի Թուղթանի[14], Մուսթաֆա Արմաղանի[15], Նիմեթ Սեքերի[16], Ամբերին Զամանի[17] հրապարակումները:

Մեր ուսումնասիրության համար կարևոր են թուրքական առաջատար հետազոտական հաստատությունները ներկայացնող վերլուծաբանների հրապարակումները: Սեդաթ Լաչիները[18], Դիբա Գյոքսելը[19], Այբարս Գորգուլուն[20], Յըլդըզ Դեվեջի Բոզքուշը[21], Օմեր Էնգին Լյութեմը[22], Բուրչու

---

[6]**Զարաքոլու Ռ.**, «Թուրքիային վախեցնում է ոչ թե Հայաստանը, այլ մեղքի զգացումը», 24.04.01, http://www.azg.am/wap/?nl=AM&id=2001042417&Base_PUB=0

[7]**Akçam T.**, Türk Ulusal Kimliği ve Ermeni Sorunu, İstanbul, 1992.

[8]**Keskin E.**: "We Are All Guilty!", http://www.armenianweekly.com/author/eren-keskin/html

[9]**Cemal H.**, Erdoğan, acıları mıkayese etmek yerine önce yüreğinde hissetse..., "Milliyet", 23.03.10

[10]**Gültaşlı S.**, Ermeni meselesinde Türk basınının büyük günahı, 16.04.07, http://www.zaman.com.tr /selcuk-gultasli/bruksel-ermeni-meselesinde-turk-basininin-buyuk-gunahi_528123.html

[11]**Altan A.**, Deliler ülkesi, 29.03.10, http://arsiv.taraf.com.tr/yazilar/ahmet-altan/deliler-ulkesi/4093/

[12]**Çandar C.**, Hrant Dink'in öldürülmesinin sırrı... radikal.com.tr, **Çandar C.**, İsveç'e çocukça tepki; böyle dış politikası olmaz, http://www.radikal.com.tr/yazarlar/cengiz_candar /isvece_cocukca_tepki_boyle_dis_politika_olmaz_1-985361,

[13]**Çelik M.**, Baykal'dan Gül'e Erivan tepkisi, "Milliyet", 05.09.08

[14]**Tuğtan M.A.**, Soykırım İddiaları ve Uluslararası İlişkilerde Realizm, 14.03.2010, hakimiyetimilliye.org

[15]**Armağan M.**, Amerika, Ermenileri 120 yıl önce de destekliyordu, http://www.zaman.com.tr /mustafa-armagan/amerika-ermenileri-120-yil-once-de-destekliyordu_961256.html

[16]**Seker N.**, "A Shift in Turkish Foreign Policy: Turkey's Strategic Depth", Qantara, 07.08.09, http://en.qantara.de/content/a-shift-in-turkish-foreign-policy-turkeys-strategic-depth

[17]**Zaman A.**, Azerbaijan Looks to Ankara.-The Middle East, N213, 11.07.92.

[18]**Laciner S.**, Turkey's EU membership and the Armenian Question, "Turkish Weekly", 11.12.04; **Laçiner S.**, Ermenistan Sınır Kapısını Açmanın Maliyeti, http://realgenocide.blogcu.com /ermenistan-sinir-kapisini-acmanin-maliyeti/2155151; **Laçiner S.**, Ermenı tasarısı hiç bu kadar işe yaramamıştı, 14.03.2010, stargazete.com; **Laçiner S.**, Ermeni Sorunu, Diaspora ve Türk Dış Politikası, Usak Yayınları / Uluslararası İlişkiler Dizisi, http://webb.deu.edu.tr/atmer /atmer/uploaded_files/file/21-Kitabiyat_Mithat_Vural_361-368.pdf, **Laçiner S.**, Ermenistan, Türkıye'nın Sınırlarını Tanıyabilır, http://www.usak.org.tr/analiz_det.php?id=1&cat= 365365889#.VSIyffl_vRs; **Laçiner S.**, Ermenistan-Türkiye İlişkilerinde Sınır Kapısı Sorunu ve Ekonomik Boyut, http://www.eraren.org/index.php?Page=DergiIcerik&IcerikNo=154

[19]**Гоксел Д.**, Кавказская политика Турции, Кавказское соседство: Турция и Южный Кавказ, Ереван, Институт Кавказа, 2008.

[20]**Горгулу А.**, Армяно-турецкие отношения: Вечный тупик?, Кавказское соседство: Турция и Южный Кавказ, Ереван, Институт Кавказа, 2008, Горгулу А., Турция и Южный Кавказ, Ежегодник института Кавказа, Ереван, 2012.

[21] **Bozkuş Y.D.**, Turkiye-Ermenistan maçi iki ülke arasinda yeni bir bailangic olabilir mi?, 27. 06.2008, http://www.eraren.org/index.php?Lisan=tr&Page=Makaleler&MakaleNo=3147

Գյուլթեքինը[23], Էրոլ Օզքորայը[24], Սերդար Քայան[25], Մուստաֆա Այդընը[26], Միթհատ Չելիքփալան[27] և ուրիշներ տարաբնույթ աշխատանքներ են հրապարակել մեր սույն ատենախոսության թեմային առնչվող հիմնախնդիրների վերաբերյալ: Հինգ տարի մասնակցելով թուրքական ԶԼՄ-ների մշադիտարկմանը՝ փորձել ենք արժևորել հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման կողմնակիցների, հակառակորդների և, այսպես ասած, չեզոքների հրապարակումները:

Ժամանակակից հայ արևելագիտության մեջ 21-րդ դարի առաջին տասնամյակի հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ճանապարհին հառնող հիմնախնդիրները բազմիցս դարձել են հետազոտության առարկա: ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանի[28], ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Նիկոլայ Հովհաննիսյանի[29] ծրագրային աշխատությունները, ինչպես նաև Հայկ Քոթանջյանի[30], Արսեն Ավագյանի[31],

---

[22]**Lütem Ö. E.**, 2002 yılının bilançosu, http://www.eraren.org/index.php?Page=DergiIcerik&IcerikNo=80, **Lütem Ö. E.,** Ermenistan'in yeni hükümeti, http://www.eraren.org/index.php?Page=DergiIcerik&IcerikNo=56, **Lütem Ö. E.**, Türkiye-Ermenistan ilişkileri, http://www.eraren.org/index.php?Page=DergiIcerik&IcerikNo=22

[23]**Գյուլթեկին Բ.**, Թուրքիայի և Հարավային Կովկասի միջև սահմանային համագործակցությունը: Տարածքային ինտեգրացիայի հեռանկարները, Հայաստան-Թուրքիա բաց խոսակցություն, Երևան, 2005.

[24]**Özkoray E.**, "Ermeni soykırımı niçin hâlâ tabu?", http://www.kuyerel.net/modules/AMS/index.php?storytopic=138&start=22

[25]**Kaya S.**, "The Rise and Decline of the Turkish "Deep State": The Ergenekon Case", Insigt Tukey, vol. 11, N4, 2009.

[26]**Aydin M.**, New Geopolitics of Central Asia and the Caucasus: Causes of Instability and Predicament, Center for Strategic Research, Ankara, 2000.

[27]**Челикпала М.**, Турция и Южный Кавказ, Ежегодник института Кавказа, Ереван, 2011.

[28]**Սաֆրաստյան Ռ.**, Հնարավոր չէ 21-րդ դարում պատնեշներ ստեղծել հարևանների միջև…, Երևան, 2003, **Սաֆրաստյան Ռ.**, Թուրքիայի պայքարը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման դեմ, http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=491, **Սաֆրաստյան Ռ.,** զեկուցում, Հայ-թուրքական հարաբերություններ, հիմնախնդիրներ և հեռանկարներ, խորհրդարանական լսումներ, 19-20 դեկտեմբերի 2007թ., Երևան, 2011:

[29]**Hovhannisyan N.**, The Karabakh Problem. Factors, Criteria, Variantsof Solution, Yerevan, 1999, **Հովհաննիսյան Ն.**, Հայոց ցեղասպանությունը Ցեղասպանագիտության հայեցակարգային համակարգում, Երևան, 2002, **Հովհաննիսյան Ն.**, Արմենոցիդը ճանաչված ցեղասպանություն է, Երևան, 2010:

[30]**Kotanjian H.**, **Safarian Al.**, A View on Armenian-Turkish Relations in the Contexts of Regional Developmnet, Regional Studies, Volume 1, Yerevan, 1996.

[31]**Ավագյան Ա.**, Թուրքիա-Ադրբեջան. «Մեկ ազգ-երկու պետություն» ռազմավարությունը Հայաստանի անվտանգության տեսանկյունից, Ռազմավարական անվտանգային հետազոտություններ, հ.1, Երևան, 2014, **Ավագյան Ա.**, «Խաղի կանոնների» փոփոխումը Մեծ եղեռնի 100-ամյակի նախաշեմին, Ռազմավարական անվտանգային հետազոտություններ, հ. 4, Երևան, 2014, **Ավագյան Ա.**, **Պողոսյան Բ.**, **Աթանեսյան Է.**, Թուրքիայի

Անուշ Հովհաննիսյանի[32], Ռուբեն Մելքոնյանի[33], Լևոն Հովսեփյանի[34], Վահրամ Տեր-Մաթևոսյանի[35], Գրիգոր Արշակյանի[36], Արամ Անանյանի[37], Տիգրան Բալայանի[38], Թաթուլ Հակոբյանի[39] մենագրություններն ու հոդվածները, Ալեքսանդր Իսկանդարյանի և Սերգեյ Մինասյանի[40] վերլուծականներն օգնել են արժևորելու հայ-թուրքական հարաբերությունների վիճակի, կարգավորմանն ուղղված բանակցությունների բովանդակության, առկա հիմնախնդիրների և դրանց նկատմամբ թուրքական և հայկական կողմերի սկզբունքային մոտեցումների հարցերը:

Հիշարժան է «Ազգ» թերթի էջերում թուրքագետ Հակոբ Չաքրյանի[41] թարգմանչական ու վերլուծական շնորհակալ աշխատանքը, որը նպաստել է

տարածաշրջանային դերի աճումը և դրա ազդեցությունը ՀՀ անվտանգության վրա, Ռազմավարական անվտանգային հետազոտություններ, հ.4, Երևան, 2014:

[32]**Հովհաննիսյան Ա.**, Թուրքիայի հանրության վերաբերմունքը Հայոց ցեղասպանության ճանաչման խնդրին, «ՎԷՄ» համահայկական հանդես, 2(38) ապրիլ-հունիս, Երևան, 2012թ.:

[33]**Мелконян Р.**, О проблеме оценки нынешнего этапа диалога Армения-Турция, Армяно-российское взаимодействие и региональные проблемы, Ереван, 2011, **Մելքոնյան Ռ.**, Հայոց Ցեղասպանության խնդիրը Թուրքիայի խորհրդարանում, http://www.noravank.am /arm/articles/detail.php?ELEMENT_ID=6144

[34]**Հովսեփյան Լ.**, Թուրքիայի վախերը. Սևրի սինդրոմ, Երևան, 2012, **Հովսեփյան Լ.**, Թուրքիայի պաշտոնական համակարգի արդիականացումը և անվտանգության ոլորտի բարեփոխումները, Երևան, 2014:

[35]**Տեր-Մաթևոսյան Վ.**, Հայ-թուրքական հարաբերությունների հեռանկարները ազգային անվտանգության ապահովման տեսանկյունից, «Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», Երևան, 2011, **Ter-Matevosyan V.**, The Armenian Community and the AK Party: Finding Trust under the Crescent, Insight Turkey Vol. 12/No. 4, 2010.

[36]**Արշակյան Գ.**, Թուրքիայի քաղաքականությունը Հարավային Կովկասում 1991-2001թթ., Երևան, 2009, **Արշակյան Գ.**, **Եղիազարյան Ա.**, Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականությունը ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, մաս առաջին, Երևան, 2014:

[37]**Անանյան Ա.**, Հայ-թուրքական երկխոսության նոր փորձ (թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի գործունեության մասին), Երևան, 2003, **Անանյան Ա.**, Հայոց ցեղասպանությունը հայ-թուրքական երկխոսության հարցի համատեքստում, Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, N9, Երևան, 2004, **Անանյան Ա.**, Հայոց ցեղասպանության ժխտման նոր փորձ, Թուրքական պատմական ընկերակցության «Հայեր. աքսոր և գաղթ» աշխատության մասին, Երևան, 2005:

[38]**Բալայան Տ.**, Ղարաբաղյան հիմնահարցը և միջազգային դիվանագիտությունը 1991-1994թթ., Երևան, 2004:

[39]**Հակոբյան Թ.**, «Հայացք Արարատից. հայերը և թուրքերը», Երևան, 2012:

[40]**Искандарян А.**, **Минасян С.**, Прагматичность политики сквозь реалии исторических ограничений: анализируя армяно-турецкий процесс, Аналитические доклады Института Кавказа, Но.1, Ереван, 2010.

[41]**Չաքրյան Հ.**, Ղարաբաղյան հիմնահարցը հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում, Երևան, 1998, **Չաքրյան Հ.**, Եվրամիությունը Թուրքիայի անդամակցությանը փորձում է նպաստել Պոլսո հայոց պատրիարքը, 30.11.02, http://www.azg.am/wap /?nl=AM&id=2002113021&Base_PUB=0

ժամանակակից թուրքական հասարական-քաղաքական կարծիքը հայաստանյան ընթերցողներին ներկայացնելուն:

Ատենախոսության մեջ օգտագործվել են ռուս առաջատար քաղաքագետ-վերլուծաբանների՝ թեմային առնչվող հետազոտությունները: Անդրեյ Արեշևը[42], Աննա Գլազովան[43], Աժդար Կուրտովը և Աբդուլլահ Խալմուխամեդովը[44], Վիկտոր Միտյայեվը[45] Ռուսաստանի ռազմաքաղաքական և աշխարհաքաղաքական շահերի տեսանկյունից ուսումնասիրել և գնահատել են հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանն ուղղված գործընթացի հիմնահարցերը:

Թուրքիայի արևելյան քաղաքականության սկզբունքային հարցերին են նվիրված անգլիացի արևելագետ, պրոֆեսոր Ուիլիամ Հեյլի[46], ամերիկյան հրեական լոբբիստ Ուիլիամ Քորեյի[47] և ամերիկյան պատմաբան, պրոֆեսոր Մայքլ Բիշկուի[48] աշխատությունները, որոնք նույնպես օգտագործվել են ատենախոսության մեջ: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում այն տարիներին ԱՄՆ պետդեպարտամենտի ավագ խորհրդատու, «Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի» համակարգող Դեվիդ Ֆիլիպսի աշխատությունը[49]:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, 9 ենթագլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ներածության մեջ հիմնավորվել են ատենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, մեթոդաբանական հիմքը, ժամանակագրական սահմանները, կիրառական նշանակությունը, աշխատանքի փորձաքննությունը, օգտագործված աղբյուրների և գրականության համառոտ տեսությունը,

---

[42]**Арешев А.**, Внешний факторե на Кавказе и российско-армянское сотрудничество, Россия-Армения: Перспективы углубления стратегического партнерства, Российской институт стратегических исследований, Москва, 2010.

[43]**Глазова А.В.**, Современное состояние и перспективы армяно-турецкого урегулирования, Армяно-российское взаимодействие и региональные проблемы, Ереван, 2011.

[44]**Куртов А.**, **Халмухамедов А.,** Армения-Турция: Противостояние или Сотрудничество?, «Армения: Пробемы независимого развитиятե, Москва, 1998.

[45]**Митяев В.**, Карабахский конфликт в контексте международных отношений, ВКН Армения: Проблемы независимого развития, Москва, 1998.

[46]**Hale W.**, Turkey, the Black Sea and Transcaucasia, in “Transcaucasian Boundaries”, New York, St. Martin’s Press, 1996.

[47]**Korey W.**, “Raphael Lemkin: “The Unofficial Man”, Midstream, June-July, 1989.

[48]**Bishku M.**, Turkey, Ethnicity, and Oil in the Caucasus.-Journal of Third World Studies, Vol.18, N2, Fall 2001, http://findarticles.com/p/articles/mi_qa3821/is_200110 /ai_n8988897/pg_8

[49]**Ֆիլիպս Դ.**, Բարձրացնելով անցյալը. Ժողովրդական դիվանագիտությունը և հայ-թուրքական հաշտեցումը, Երևան, 2005

ինչպես նաև ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսության **առաջին գլուխը՝** «Թուրքիայի և Հայաստանի միջև հարաբերությունների կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո», բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Թուրքիայի և Հայաստանի միջպետական հարաբերությունները 1990-ական թթ.», ուսումնասիրված են Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո Թուրքիայի Հանրապետության հետ բնականոն հարաբերություններ հաստատելու օբյեկտիվորեն հասունացած խնդիրը և այդ ճանապարհին գործադրված քաղաքական ու դիվանագիտական ջանքերը: Թուրքիան ճանաչեց Հայաստանի անկախությունը 1991 թ. դեկտեմբերին, սակայն դիվանագիտական հարաբերություններ հաստատելը պայմանավորեց նախապայմաններով: ՀՀ քաղաքական ղեկավարությունն առաջ էր տանում առանց նախապայմանների դիվանագիտական հարաբերություններ հաստատելու և առևտրատնտեսական հարաբերություններ ծավալելու գիծը: Թեև առաջին շփումները հայ-թուրքական հարաբերությունների նորմալացման հույս էին ներշնչում, սակայն ՀՀ առաջին նախագահի կառավարման շրջանում հայկական կողմից գործադրած ջանքերը որևէ արդյունքի չհանգեցրեցին:

Երկրորդ ենթագլխում՝ «Հայկական հարցը» ժամանակակից Թուրքիայի հասարակական-քաղաքական դիսկուրսում», վերլուծված է այն հիմնախնդիրների ամբողջությունը, որը Թուրքիայի հասարակական-քաղաքական կարծիքում ավանդաբար անվանվում է «Հայկական հարց»: Տասնամյակների ընթացքում պաշտոնական գաղափարախոսության տեսք ստացած Հայոց ցեղասպանության փաստի ժխտումն ու ուրացումն ունի բազմաթիվ խորքային պատճառներ: 1920-ական թթ. սկսած Թուրքիայում գործադրվել են հսկայական ջանքեր հայերի զանգվածային բնաջնջման, տեղահանության, բռնի դավանափոխության և ունեզրկման խնդիրներն ուրանալու ուղղությամբ, ստեղծվել են արևմտահայության հայրենազրման փաստը «յուրովի» մեկնաբանող տեսություններ, որոնք ժամանակի ընթացքում դարձել են պաշտոնական: Թուրքական «խորքային պետությունը» Հայաստանի և «Հայկական հարցի» հանդեպ ունի ընդգծված բացասական վերաբերմունք: «Սևրի սինդրոմ» անվանումը ստացած վախերի ամբողջությունը հետևողականորեն սերմանվել է վերնախավերի կողմից թուրքական հասարակական-քաղաքական կարծիքում և արմատավորվել իբրև մշտական աչալրջության և պայքարի պատրաստ լինելու վիճակ արտաքին դավադրություններին դիմակայելու և երկրի մասնատումը թույլ չտալու համար: 1965 թ.-ից կազմակերպված բնույթ ստացած հայության պահանջատիրությունը Հայոց ցեղասպանության փաստը ճանաչել տալու և դատապարտելու ուղղությամբ Թուրքիան ընկալել է որպես սպառնալիք և գործադրել է քաղաքական և կազմակերպչական ջանքեր դրան դիմակայելու համար:

Երրորդ ենթագլխում՝ «Լեռնային Ղարաբաղի հակամարտության հիմնախնդիրը հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում»,

ուսումնասիրվում է ԼՂ հակամարտության գործոնը հարաբերությունների կարգավորմանն ուղղված հայ-թուրքական երկխոսության մեջ: ԼՂ հակամարտության ռազմական գործողությունների փուլում (1991-1994 թթ.) Թուրքիան Ադրբեջանին ցուցաբերեց համակողմանի (քաղաքական, դիվանագիտական, ռազմատեխնիկական և այլ) աջակցություն: Թուրքական ուղղակի ռազմական միջամտությունը ԼՂ համակարտության ռազմական գործողությունների ծավալման ընթացքում կանխվել է աշխարհի ուժային կենտրոնների կողմից, որոնք ներկայացվեցին ԵԱՀԽ/ԵԱՀԿ Մինսկի խմբում՝ ջանալով գտնել հարցի խաղաղ լուծում, միաժամանակ չխորանալով այն հարցի մեջ, թե ով է հակամարտության հրահրման բուն մեղավորը: Թուրքիան 1993 թ. գարնանից փակեց հայ-թուրքական սահմանը և H55 օդային միջանցքը և իրականացնում էր ճնշման ու հարկադրանքի քաղաքականություն՝ հանդես գալով միակողմանի, ադրբեջանամետ դիրքերից: Թուրքիայի ջանքերը՝ ավելի մեծ դեր ստանձնելու ԼՂ հակամարտության կարգավորման գործում հաջողություն չունեցան: Թուրքիան Հայաստանի դեմ ուղղակի ռամական գործողություններ չիրականացրեց՝ խուսափելով Ռուսաստանի հետ առճակատումից: Այսպիսով, Թուրքիան, 1990-ական թթ. (ինչպես և դրանից հետո) հայ-թուրքական հարաբերությունների նորմալացման ճանապարհին որպես նախապայման, մասնավորապես, պահանջում էր Հայաստանից միակողմանի զիջումների գնալ ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացում՝ հանդես գալով ադրբեջանամետ դիրքերից:

Ատենախոսության **երկրորդ գլուխը՝** «Թուրքիայի և Հայաստանի միջև երկխոսության փորձերը 2001-2007 թթ.», բաղկացած է երեք ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ «Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորմանն ուղղված դիվանագիտական ու հասարակական երկխոսության փորձերը և դրանց արձագանքները թուրքական հասարակական-քաղաքական կարծիքում», հանգամանորեն վերլուծության է ենթարկվում 2001 թ. ստեղծված Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի (ՀԹՀՀ) գործունեությունն արդյուքների տեսանկյունից (մասնավորապես, Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի եզրակացությունը և ՀԹՀՀ-ի հանձնարարականները, որոնք ընկան հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցում ամերիկյան մոտեցումների հիմքում): 2002 թ. իշխանության ղեկը ստանձնած «Արդարություն և զարգացում» կուսակցությունը հանդես եկավ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանն ուղղված նախաձեռնություններով՝ «զրո պրոբլեմ հարևանների հետ» համադրույթի կենսագործման ճանապարհին: 2002 թ. սկսած տեղի ունեցան ՀՀ և ԹՀ արտգործնախարարների հանդիպումներ, որոնք, հակառակ լավատեսական սպասումների, էական արդյունքի չհանգեցրին: Այդ շրջանի նշանակալից երևույթներից մեկը Թուրքիայի հասարակական-քաղաքական քննարկումների դաշտում հայկական «տաբուի» վերացման իրողությունն էր:

Երկրորդ ենթագլխում՝ «Հայ-թուրքական հարաբերությունների ձևավորման փորձերի նոր ալիք», վերլուծության են ենթարկվում ԹՀ վարչապետ Ռ. Թ. Էրդողանի նամակը ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանին և Ռ. Քոչարյանի

պատասխան նամակը Ռ. Թ. Էրդողանին: Ինչպես հայկական, այնպես էլ թուրքական ներքաղաքական դիսկուրսում սկսեց քննարկվել «պատմաբանների հանձնաժողովի» ստեղծման հիմնախնդիրը: Արծարծելով դրա ստեղծման «անհրաժեշտությունը՝ Թուրքիայի քաղաքական վերնախավը փորձում էր միջազգային քաղաքական, հասարակական, գիտական և փորձագիտական շրջանակներում ընկալված և ճանաչված Հայոց ցեղասպանության իրողությունը տեղափոխել «պատմագիտական» քննարկումների դաշտ՝ ձգտելով կասկածի տակ դնել այդ փաստը, նորովի առաջ մղել ժխտողականությունն ու հետաձգել խնդրին քաղաքական գնահատական տալու ուրվագծվող անհրաժեշտությունը: Հայկական գիտափորձագիտական շրջանակներում բյուրեղացավ այն տեսակետը, որ պատմաբանների հանձնաժողովում Հայոց ցեղասպանության թեմայի քննարկումն անընդունելի զիջում է:

2005 թ.-ից Թուրքիան բանակցություններ էր վարում ԵՄ-ին անդամակցության հարցով, իսկ Հայաստանն ընդգրկվեց ԵՄ Նոր հարևանության քաղաքականության ծիրում, ինչը նպաստավոր էր թվում նաև երկկողմ հարաբերությունների կարգավորումն առաջ մղելու համար: Ենթագլխում քննվում են թուրք քաղաքական գործիչների, վերլուծաբանների ու լրագրողների հրապարակումները վերոհիշյալ համապատկերում:

Երրորդ ենթագլխում՝ «Հայաստանի և Թուրքիայի միջև առեվտրատնտեսական կապերը դիվանագիտական հարաբերությունների բացակայության և փակ սահմանների պայմաններում», ուսումնասիրության առարկա է դարձել պաշտոնական հարաբերությունների բացակայության և փակ սահմանների պայմաններում ծավալվող հայ-թուրքական առևտրատնտեսական հարաբերությունների ընդհանուր պատկերը: Հետազոտությունները ցույց են տվել, որ թուրք գործարարների շրջանում կար հետաքրքրություն հայ գործընկերների հետ գործարար կապեր հաստատելու և զարգացնելու հարցում: Հայ-թուրքական առևտրատնտեսական կապերի զարգացման դիրքերից Թուրքիայում հանդես են եկել արևելյան շրջանների տեղական իշխանությունների ներկայացուցիչներ և գործարարներ: Նրանք էլ հանդիսացել են Թուրք-հայկական տնտեսական կոմիտեի գործուն անդամներ՝ բազմիցս այցելելով Հայաստան և Թուրքիայում ընդունելով հայկական պատվիրակություններ: Նրանց ձայնը, սակայն, թուրքական հասարակական-քաղաքական կարծիքի ընդհանուր համապատկերում բավական թույլ է եղել, իսկ կարծիքն ի վիճակի չի եղել ազդելու Թուրքիայի քաղաքական վերնախավերում իշխող տրամադրությունների վրա: Թուրքիայի իշխանությունները փորձել են շահարկել իրենց երկրում ապրող և աշխատող Հայաստանի քաղաքացիների կեցության կարգավիճակն ու ճնշում գործադրել Հայաստանի և Սփյուռքի հանրային կարծիքի վրա՝ սպառնալով երկրից վտարել հայաստանցի միգրանտներին: Այդ սպառնալիքները չեն իրագործվել, որովհետև թուրքական իշխանությունները հասկացել են միջազգային, մասնավորապես, ԱՄՆ և ԵՄ հասարակական կարծիքի հնարավոր խիստ արձագանքն այդ քայլերն անելու դեպքում:

Ատենախոսության **երրորդ գլուխը՝** «Թուրքիայի և Հայաստանի միջև

հարաբերությունների հաստատման նոր հիմնարար փորձը (2008-2011 թթ.)», բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Թուրքիայի հետ Հայաստանի հարաբերությունների կարգավորմանն ուղղված նոր նախաձեռնությունը և դրա արձագանքները թուրքական ներքաղաքական դիսկուրսում», ուսումնասիրվել են 2008 թ. սեպտեմբերի 6-ին ՀՀ նախագահ Ս. Սարգսյանի հրավերով Թուրքիայի նախագահի Երևան կատարած այցի, «ֆուտբոլային դիվանագիտության» ծավալման երկկողմ բանակցությունների արձագանքները թուրքական հասարակական-քաղաքական կարծիքում: Ուշագրավ է, որ այդ շրջանում թուրքական ԶԼՄ-ների հրապարակումները հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման թեմաներով եղել են ավելի շատ, քան երևբևէ նախկինում, ընդ որում զգալի թիվ են կազմել դրական կամ չեզոք տոնայնությամբ հրապարակումները: «Ֆուտբոլային դիվանագիտությունը» ծավալվել է թուրքական և հայկական հասարակությունների ակնդետ ուշադրության պայմաններում և, մասնավորապես, ներթուրքական դիսկուրսում արձանագրվել են դրական սպասումներ: Ենթագլխում քննության են ենթարկվել նաև «Կովկասյան պլատֆորմ» թուրքական նախաձեռնության նպատակը, առաջ մղման միջոցները և Հարավային Կովկասի երկրներից յուրաքանչյուրի վրաբերմունքը դրա նկատմամբ: Թեև կողմերը (յուրաքանչյուրն իր ազգային շահերի տեսանկյունից) չէին առարկում վերոհիշյալ նախաձեռնությանը, այն կյանքի չկոչվեց:

Երկրորդ ենթագլխում՝ «Թուրքիայի հասարակական-քաղաքական կարծիքը Ցյուրիխյան արձանագրությունների վավերացման հիմնահարցի մասին», քննարկման առարկա է դարձել 2009 թ. հոկտեմբերի 10-ին Ժնևում ԱՄՆ պետքարտուղարի, Ֆրանսիայի և Ռուսաստանի արտգործնախարարների հովանավորությամբ, Շվեյցարիայի արտգործնախարարության միջնորդության պայմաններում Հայաստանի և Թուրքիայի արտգործնախարարների միջև երկու արձանագրությունների ստորագրումից հետո ծավալված գաղափարական-քաղաքական պայքարը ինչպես Թուրքիայում, այնպես էլ Հայաստանում: «Ցյուրիխյան արձանագրություններ» անվանումը ստացած այդ փաստաթղթերը բուռն քննարկումների թեմա դարձան թուրքական ներքաղաքական դաշտում՝ անմիջապես զուգորդվելով նախապայմանների առաջադրմամբ (Ճանաչել 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերը, հրաժարվել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հետապնդումից, դուրս բերել հայկական զորքերը «ադրբեջանական գրավյալ տարածքներից»): Թուրքիայի հասարակական-քաղաքական դաշտում զգալի էր ադրբեջանական գործոնի ազդեցությունը (Ադրբեջանի հասարակական-քաղաքական դաշտը ծայրահեղ թշնամանքով արձագանքեց հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման այս հնարավորությանը): Հակառակ «ողջամիտ ժամկետներում» արձանագրությունները վավերացնելու միջազգային հանրության սպասումներին, Թուրքիայի և Հայաստանի խորհրդարաններում վավերացումը սառեցվեց անորոշ ժամանակով:

Երրորդ ենթագլուխը՝ «Հայ-թուրքական կարգավորման գործընթացի

սառեցման հայկական փաստարկները», ունի ամփոփիչ և եզրափակիչ բնույթ, նվիրված է Ցյուրիխյան արձանագրությունները չվավերացնելու հարցում Հայաստանի պաշտոնական դիրքորոշումներին: Այս վերլուծությունն ունի գիտագործնական նշանակություն, քանի որ թուրքական կողմը արձանագրությունների չվավերացման մեղքը փորձում է բարդել Հայաստանի վրա, այնինչ իրականում այդ արձանագրությունները չեն վավերացվել, որովհետև գործընթացն ուղեկցվել է մեր պետությանը նախապայմանների առաջադրմամբ, ինչը նահանջ էր արձանագրությունների ստորագրման տրամաբանությունից ու վերադարձ էր ճնշման և հարկադրանքի քաղաքականությանը: Վերլուծված են ՀՀ նախագահ Ս. Սարգսյանի և արտգործնախարար Է. Նալբանդյանի հրապարակային ելույթները, որոտեղ ձևակերպված են Հայաստանի մոտեցումները Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման հիմնահարցում: Հայաստանի դիրքորոշումները քննության առարկա հարցում եղել են հասկանալի և կանխատեսելի միջազգային հանրության համար, իսկ Հայաստանի պատրաստակամությունը Թուրքիայի հետ առանց նախապայմանների պաշտոնական հարաբերություններ հաստատելու ուղղությամբ արժանացել է աշխարհի ուժային կենտրոնների հավանությանը:

Եզրակացությունում ամփոփված են ատենախոսության առարկայի ուսումնասիրության արդյունքում հեղինակի կատարած հետևյալ հիմնական եզրահանգումները.

- Թուրքիայի Հանրապետությունը, հետխորհրդային պետությունների շարքում ճանաչելով Հայաստանի Հանրապետությունը, դիվանագիտական հարաբերություններ չհաստատեց նրա հետ՝ առաջադրելով նախապայմաններ (Թուրքիայի և Ադրբեջանի տարածքային ամբողջականության, 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերով հաստատված հայ-թուրքական սահմանի ճանաչում, Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտուց հայկական զինված ուժերի դուրսբերում, Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման պահանջից հրաժարում):
- Թուրքական նախապայմաններին ի պատասխան՝ Հայաստանի իշխանությունները մշտապես փորձել են կարգավորել հարաբերությունները հարևան Թուրքիայի հետ առանց նախապայմանների, հաստատել դիվանագիտական հարաբերություններ, իսկ 1993 թ.-ից՝ վերաբացել փակված հայ-թուրքական սահմանը: Թուրքական պահանջներին ի պատասխան՝ Հայաստանն առաջ է մղել այն մոտեցումները, որ ՀՀ-ն, դառնալով միջազգային հանրության և կազմակերպությունների անդամ, ինքնըստինքյան ճանաչել է բոլոր պետությունների տարածքային ամբողջականությունը, հայ-թուրքական սահմանը ճանաչված է, քանի որ հակառակ դեպքում վերոհիշյալ պայմանագրերը դենոնսացիայի կենթարկվեին, և Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցում գլխավոր խնդիրը անկախ և անվտանգ ԼՂՀ ճանաչումն է ազգերի ինքնորոշման ունիվերսալ իրավունքի հիման վրա:
- ԽՍՀՄ փլուզումից հետո Թուրքիայի իշխանությունները ջանքեր են

գործադրել Հարավային Կովկասում (մասնավորապես, Հայաստանում) ազդեցությունը մեծացնելու ուղղությամբ, և իբրև ազդեցիկ գործոն Հարավային Կովկասում, փորձել են ստանձնել ավելի ակտիվ միջնորդական դերակատարություն ունենալ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացում: Միաժամանակ, Թուրքիան, բացի Հայաստանի դեմ ուղղակի ռազմական միջամտությունից, բոլոր հնարավոր միջոցներով աջակցելով եղբայրական Ադրբեջանին, չէր կարող հանդիսանալ անաչառ միջնորդ, և թուրքական դիվանագիտության ջանքերը ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացում չունեցան էական նշանակություն: Թուրքիան Ադրբեջանին մշտապես համարել է մերձավորագույն դաշնակից և ռազմավարական գործընկեր՝ կենսագործելով «Մեկ ազգ, երկու պետություն» կարգախոսը:

- Թուրքական հասարակական-քաղաքական կարծիքում (մասնավորապես, ԽՍՀՄ փլուզումից հետո) առկա էր անհանգստություն մեծ տերությունների դավադրությունների արդյունքում Թուրքիայի հնարավոր անդամահատման հարցում: Չնայած մշտապես հնչող առարկությանը, թե՝ Հայաստանը չի կարող իրական սպառնալիք լինել Թուրքիայի համար, «Սևրի սինդրոմը» շահարկվել է ազգայնական ուժերի, ռազմական վերնախավի, «խորքային պետության» կողմից թուրքական հասարակությունը «զգոն» պահելու և ուղղորդելու նպատակով:
- 2000-ական թթ. ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի և նրան սատարող քաղաքական ուժերի կողմից Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման գործընթացը ներառվեց արտաքին քաղաքական առաջնահերթությունների շարքում: Մի շարք պետություններ այդ տարիներին ճանաչեցին Հայոց ցեղասպանությունը: Քննության առարկա ժամանակաշրջանում Թուրքիայում նշանակալից երևույթ դարձավ Հայոց ցեղասպանության կամ ներթուրքական դիսկուրսում առկա «Հայկական հարցի» քննարկման տաբուի վերացումը: Հանդես եկան լայնախոհ և համարձակ մտավորականներ՝ հայտարարելով, որ Թուրքիան պետք է առերեսվի սեփական պատմության հետ, և Հայոց ցեղասպանության պատմական իրողությունը պետք է ճանաչվի իշխանությունների կողմից, սակայն ժխտողական քաղաքականության շարունակման և դրա՝ նոր պայմաններին հարմարեցրած գործառույթներն առաջ մղելու կողմնակիցներն առավել ուժեղ էին և օգտվում էին իշխանությունների ու վերնախավերի լայն աջակցությունից:
- ԱՄՆ նախաձեռնությամբ ստեղծված ՀԹՀՀ-ը, ունենալով ընդգծված ոչ պաշտոնական հասարակական բնույթ, հետաքրքրություն առաջացրեց երկու երկրների հասարակական-քաղաքական շրջաններում: ՀԹՀՀ երկամյա գործունեության արդյունքում Անցումային արդարադատության միջազգային կենտրոնը եզրակացրեց, որ 1915 թ. իրողությունների նկատմամբ կիրառելի է «ցեղասպանություն» եզրը՝ նշելով, որ դրանից իրավական հետևանքներ չեն բխում: Հաջորդ տարիներին ՀԹՀՀ մշակած երաշխավորությունները, փաստորեն, ընկան հայ-թուրքական հարաբերությունների հարցում

ամերիկյան քաղաքական մոտեցումների հիմքում:

- Թուրքիայի՝ Եվրոպական միությանն անդամակցելու բանակցությունները և Հայաստանի հռչակած եվրաինտեգրման գործընթացը դիտվեցին որպես դրական ազդակ միջպետական հարաբերությունների կարգավորման և հայ-թուրքական սահմանի բացման համար: Եվրոպական ինտեգրման ընդհանուր քաղաքականությունը թվում էր մի նոր նպաստավոր հարթակ, որտեղ երկու երկրների դիրքորոշումները կարող են մոտենալ միմյանց: Թուրքիայի վարչապետ Ռ. Թ. Էրդողանի և ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի նամակագրությունը հայ-թուրքական երկխոսությունը և կողմերին հուզող հարցերի քննարկումը բարձրացրեց նոր բարձր մակարդակ:
- Քննության առարկա տասնամյակում Թուրքիայի իշխանությունները շարունակում էին վարել Հայոց ցեղասպանության փաստը ժխտող քաղաքականություն, որին լծված էին թե՛ իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցությունը, թե՛ ԹԱՄԺ-ում ազգայնական ընդդիմությունը, թե՛ Ազգային անվտանգության խորհուրդը: Պետական պատվեր կատարող գիտահետազոտական ու վերլուծական կենտրոններին և զանազան կառույցներին ավելացան նորերը: Հակառակ քննարկումների խորհրդապահությանը, նրանց գործունեության և ընթացիկ նպատակների մասին որոշ տեղեկություններ հայտնի են դարձել թուրքական ԶԼՄ-ներին:
- Քննարկվող ժամանակաշրջանում հասարակական հետաքրքրության խնդիրներից մեկն էր այսպես կոչված «պատմաբանների հանձնաժողովի հարցը»: Առաջ մղելով դրա ստեղծման անհրաժեշտությունը՝ Թուրքիայի առաջնորդները փորձում էին անվերջ քննարկումների և հարցը պատմաբաններին թողնելու միջոցով առաջ մղել ժխտողականության քաղաքականությունը, մանևրում էին միջազգային հարթակներում և ձգձգում էին հարցին քաղաքական գնահատական տալու անխուսափելի անհրաժեշտությունը: Այդ տարիներին սկսած ՀԹՀՀ-ի գործունեությունից և Էրդողան-Քոչարյան նամակագրությունից առ այսօր Հայաստանի գիտական և փորձագիտական շրջանակերում արմատացել ու բյուրեղացել է այն տեսակետը, որ, «պատմաբանների հանձնաժողովում» Հայոց ցեղասպանության թեմայի քննարկումը կասկածի տակ կդնի նրա պատմական անվիճելիությունը, ինչն անընդունելի նահանջ է:
- Հայ-թուրքական առևտրատնտեսական հարաբերությունները, ծավալվելով փակ սահմանների ու Թուրքիայի կառավարության կողմից հայտարարած արգելամիջոցների (էմբարգոյի) պայմաններում, Հայաստանի ներկրման ընդհանուր ծավալում էական բաժին են կազմել, սակայն թուրք վերլուծաբանների գնահատմամբ, չէին կարող էական ազդեցություն ունենալ նույնիսկ Թուրքիայի՝ Հայաստանի սահմանակից արևելյան նահանգների տնտեսական վիճակի բարելավման հնարավորության վրա: Թուրքիայի առևտրատնտեսական որոշ շրջանակներ և Հայաստանին սահմանակից տարածքների տեղական իշխանությունների ներկայացուցիչներ հանդես են եկել հայ-թուրքական սահմանը վերաբացելու և հարաբերությունները կարգավորելու օգտին, սակայն նրանց ձայնը թուրքական հասարակական-

քաղաքական կարծիքի ընդհանուր համապատկերում թույլ է հնչել և չէր կարող ազդեցություն գործել Թուրքիայի իրականացրած գործնական քաղաքականության վրա:

- Հայաստանի գիտափորձագիտական շրջանակները հայ-թուրքական քաղաքական-դիվանագիտական երկխոսության («ֆուտբոլային դիվանագիտության» ծավալման) ժամանակ զգուշացրել են հայ-թուրքական սահմանի վերաբացման և ուղիղ առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման դեպքում Հայաստանի տնտեսության համար առաջացող մարտահրավերների մասին:
- 2008 թ. Թուրքիայի նախագահ Ա. Գյուլի այցը Հայաստան, մասնավորապես, նրա շփումները Հայաստանի նախագահ Ս. Սարգսյանի հետ, դրան հաջորդած գործընթացները, որոնք ԶԼՄ-ներում ստացան «ֆուտբոլային դիվանագիտություն» անվանումը, հանգեցրին Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև Ցյուրիխյան արձանագրությունների ստորագրմանը: Այդ արձանագրությունները կարող էին դառնալ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հիմք, եթե իրականություն դառնային փակ սահմանների բացումը և դիվանագիտական հարաբերությունների հաստատումը: Քաղաքական մի շարք գործիչներ, դիվանագետներ, քաղաքագետներ, լրագրողներ և ճանաչված մտավորականներ 2008-2011 թթ. հայտարարել են, որ մեծ հաշվով, շուտ թե ուշ, այդ ամենը մի օր տեղի է ունենալու, որովհետև դա բխում է խաղաղ և կանխատեսելի տարածաշրջանում ապրելու բոլոր ժողովուրդների կենսական շահերից:
- 2008-2011 թթ. թուրքական լրատվամիջոցները Հայաստանի և հայ-թուրքական հարաբերությունների մասին խոսել են ավելի շատ, քան երբևէ նախկինում, ընդ որում, Հայաստանի իշխանությունների և քաղաքականության մասին սկսել են գրել կամ խոսել նաև չեզոք կամ դրական տոնայնությամբ: Թուրքական ԶԼՄ-ների մշտադիտարկումը, որին մասնակցել է նաև ատենախոսության հեղինակը, թույլ է տվել եզրակացնելու, որ թուրքական քաղաքական վերնախավում առաջին անգամ հրապարակային բանավեճ է առաջացել Հայաստանի հետ հարաբերությունները բարելավելու կողմնակիցների և հակառակորդների միջև: Հակառակորդները, հենվելով ազգայնական գաղափարախոսության վրա և առաջնային համարելով եղբայրական Ադրբեջանի հետ հարաբերությունները, չեն տեսնում հօգուտ Հայաստանի հետ հարաբերությունները բարելավելու ծանրակշիռ փաստարկներ, առավել ակտիվ հանդես են գալիս Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ թուրքական քաղաքական ռեսուրսի մոբիլիզացիայի օգտին:
- Թուրքիայում թուրք-հայկական երկկողմ հարաբերությունների կարգավորման կողմնակիցների դատողություններն ավելի ճկուն են: Այս շրջանակները համոզված են, որ քանի որ Հայաստանը, միևնույն է, չի հրաժարվելու Հայոց ցեղասպանության միջազգային դատապարտման գործընթացից, Երևանի հետ պաշտոնական երկխոսության միջոցով կկարողանան մեղմել այդ գործընթացի հետևանքները Թուրքիայի համար:

Երկու երկրների խորհրդարաններում Ցյուրիխյան արձանագրությունների վավերացման հարցն ընթացիկ օրակարգերից դուրս բերելը խոսում է այն մասին, որ առանց նախապայմանների երկկողմ հարաբերությունները կարգավորելու փորձն առ այսօր հաջողություն չի ունեցել: Փաստ է, որ նախագահ Գյուլի, վարչապետ Էրդողանի, նախկին արտգործնախարարներ Բաբաջանի և Դավութօղլուի հրապարակային հայտարարություններն իրենց վրա կրում էին ներթուրքական քննարկումների և բանավեճերի կնիքը: Փորձելով հակազդել Հայոց ցեղասպանության ճանաչման ժամանակակից գործընթացներին՝ Թուրքիայի իշխանությունները շարունակել են ջանքեր գործադրել պատմական ճշմարտությունը նենգափոխելու և ուրանալու ուղղությամբ: Միաժամանակ, Թուրքիայի ներսում Հայոց ցեղասպանության մասին հրապարակային քննարկումների տոնայնության որոշ փոփոխությունը և ԱՄՆ-ից, ԵՄ-ից, ՌԴ-ից պարբերաբար ստացվող ազդակները թույլ են տալիս կանխատեսել, որ վերոհիշյալ քննարկումներն ունեն ծավալման միտում:

- Հայաստանի հավաքական հասարակական և քաղաքական միտքը, թվում է, դեռևս բավականաչափ հստակ չէր ձևակերպել Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման հեռանկարի իր տեսլականը: Երևանում ձեռնարկվող քաղաքական ուժերի և մասնագետների հնարավոր ամենալայն մասնակցությամբ քննարկումները Թուրքիայի հետ հարաբերությունները կարգավորելու հիմնախնդիրների և համապատասխան ադապտացիոն մեխանիզմների մշակման նպատակով կարևորվում են մեր քաղաքական մտքի հավաքական մոտեցումները հայ-թուրքական հարաբերությունների հարցում բյուրեղացնելու համար: ՀՀ քաղաքական շրջանակներում, իհարկե, շատ լավ գիտակցում են, որ հանուն հայ-թուրքական հարաբերությունները կարգավորելու զիջումների գնալը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցում կամ միակողմանի զիջումները Լեռնային Ղարաբաղի կարգավորման գործընթացում կհակասեն մեր ազգային շահերին: Պարզ է նաև, որ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման գործընթացից փաստացի հրաժարումն անուղղելի հարված կհասցնի Հայաստան-Սփյուռք միասնությանը: Մյուս կողմից՝ Հայաստանում կարծես տարաձայնություն չկա այն հարցում, որ Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորումը կարևոր և էական հարց է: Դրա համար էլ պաշտոնական այն ձևակերպումը, ըստ որի՝ Հայաստանը կողմ է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանն առանց նախապայմանների, շարունակում է մնալ արդիական:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Հայ-թուրքական կարգավորման գործընթացի սառեցման հայկական փաստարկների շուրջ, Մերձավոր Արևելք, Հոդվածների ժողովածու, VIII, Երևան, 2012, էջ 313-321:
2. «Ֆուտբոլային դիվանագիտության» ծավալման արդյունքում հայ-թուրքական հարաբերությունների վիճակի գնահատման հարցի շուրջ, Արևելագիտության հարցեր, Երևան, 2012, էջ 219-228:
3. Հայ-թուրքական առևտրատնտեսական կապերը դիվանագիտական հարաբերությունների բացակայության և փակ սահմանների պայմաններում (2001-2011 թթ.), «21-րդ դար», №4, Երևան, 2014, էջ 69-82:
4. Թուրքիայի հասարակական-քաղաքական կարծիքը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հիմնախնդրի մասին, «21-րդ դար», №1, Երևան, 2015, էջ 120-134:
5. К вопросу о позиции турецкой общественно-политической мысли по проблеме установления официальных отношений с Арменией (1991-1998гг.), «21-ый век», №2, Ереван, 2015, с. 119-134.

САФАРЯН ДАВИД АРАМОВИЧ

ПРОБЛЕМЫ УРЕГУЛИРОВАНИЯ ТУРЕЦКО-АРМЯНСКИХ МЕЖГОСУДАРСТВЕННЫХ ОТНОШЕНИЙ И ИХ ОТРАЖЕНИЕ ВО ВНУТРИТУРЕЦКОМ ДИСКУРСЕ (2001 - 2011 гг.)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 -«Всемирная история».
Зашита состоится 12-го июня 2015 г., в 15.00 ч. на заседании специализированного совета 006, действующего при Институте востоковедения НАН РА, по адресу: 0019, г. Ереван, пр. Маршала Баграмяана 24/4.

РЕЗЮМЕ

Диссертация посвящена исследованию проблем, препятствующих установлению дипломатических отношений и открытию границ между Турецкой Республикой и Республикой Армения, а также обсуждениям данной проблематики в турецком общественно-политическом мнении в годы первого десятилетия правления Партии «Справедливость и Развитие». Целью диссертации является выявление новых подходов турецкой политики и анализ причин преемственности турецкого внешнеполитического курса в отношении Армении в вышеуказанный период. В диссертации, на основе анализа публичных выступлений ведущих турецких и армянских политиков, турецких, армянских, российских и западных публикаций (в частности,- многолетнего мониторинга турецких СМИ), научных исследований и оценки аналитических материалов, впервые по возможности всесторонне представлены и обобщены подходы и мнения турецких политиков, дипломатов, военных, аналитиков, журналистов и известных общественных деятелей по проблеме нормализации армяно-турецких отношений.

Диссертация состоит из введения, трех глав (девяти параграфов), выводов, списка использованных источников и литературы.

Во введении обосновывается актуальность темы и ее новизна, научно-прикладное значение исследования, указываются основные цели и задачи работы, ее методологическая база и хронологические рамки, дается краткий обзор использованных источников и литературы.

Первая глава диссертации озаглавлена **«Проблемы урегулирования взаимоотношений между Турцией и Арменией после провозглашения независимости Республики Армения»**, которая состоит из трех параграфов. В первом параграфе – **«Межгосударственные отношения Турции и Армении в 1990-ых гг.»**, проанализирована предыстория выдвижения турецкой стороной предварительных условий на пути установления дипломатических отношений с РА. Во втором параграфе – **«Армянский вопрос» в общественно-политическом дискурсе современной Турции»** исследован комплекс проблем,

традиционно именуемом в турецком общественно-политическом дискурсе «Армянским вопросом» и причины отрицания факта Геноцида армян. В третьем параграфе – **«Проблемы Нагорно-Карабахского конфликта в контексте армяно-турецких отношений»** рассмотрено влияние фактора карабахского конфликта в армяно-турецком диалоге по нормализации отношений и выявлена тенденциозная, проазербайджанская позиция турецких элит.

Вторая глава диссертации – **«Попытки диалога между Турцией и Арменией в 2001-2007 гг.»**, состоит из трех параграфов. В первом параграфе – **«Попытки дипломатического и общественного диалога, направленного на урегулирование отношений Армения – Турция и их отражение в турецком общественно-политическом мнении»**, проанализированы результаты деятельности Армяно-турецкой комиссии по примирению, дипломатических усилий, предпринятых министрами иностранных дел двух стран, снятие «табу» во внутритурецких обсуждениях по «Армянскому вопросу». Во втором параграфе – **«Новая волна попыток формирования армяно-турецких отношений»** - исследован общественный резонанс, вызванный письмом Премьер-министра Турции Р.Т. Эрдогана Президенту Армении Р.Кочаряну и его ответным письмом. Отмечено и формирование благоприятного фона для нормализации двусторонних отношений, обусловленного переговорами по вступлению Турции в ЕС и развертыванием политики Евроинтеграции Армении в рамках программы «Нового соседства». В третьем параграфе – **«Торгово-экономические связи между Арменией и Турцией в условиях отсутствия дипломатических отношений и закрытых границ»**, исследованы динамика и сферы торгово-экономических отношений, в том числе и недостаточная степень их влияния при принятии решений по нормализации турецко-армянских отношений.

Третья глава диссертации – **«Новая основательная попытка установления отношений между Турцией и Арменией (2008 – 2011 гг.)»** состоит из трех параграфов. В первом параграфе – **«Новая инициатива, направленная на урегулирование отношений Армении с Турцией и ее отражение в турецком внутриполитическом дискурсе»** изучен процесс развертывания т.н. «футбольной дипломатии» и ее отголоски в турецких СМИ. Указаны причины провала турецкой инициативы по созданию «Кавказской платформы». Во втором параграфе – **«Общественно-политическое мнение Турции о проблеме ратификации Цюрихских протоколов»** проанализирован модус консолидации турецкой позиции по выдвижению предварительных условий и оценен фактор азербайджанского влияния в процессе ратификации вышеуказанных протоколов. Третий параграф – **«Армянские аргументы замораживания процесса армяно-турецкого урегулирования»** имеет подытоживающий характер, опровергает турецкие попытки взвалить ответственность по приостановке ратификации Цюрихских протоколов на Армению, и раскрывает официальную армянскую позицию, выраженную в публичных выступлениях Президента РА С. Саргсяна и министра иностранных дел Э. Налбандяна.

В Заключении приведены основные выводы диссертации.

SAFARYAN DAVIT ARAM

PROBLEMS OF SETTLING THE ARMENIAN-TURKISH INTERGOVERNMENTAL RELATIONS AND THEIR IMPACT ON THE INNER TURKISH DISCOURSE (2001-2011)

The defense of the dissertation will take place at 15.00, on June 12, 2015 at the meeting of Specialized Council 006 acting at the Institute of Oriental Studies of NAS RA.
Address: Yerevan, 0019, Marshal Baghramyan ave, 24/4.
The dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Philosophy in the Field of "World History" 07.00.02.

SUMMARY

The thesis deals with problems preventing the establishment of diplomatic relations and opening of the borders between Turkey and the Republic of Armenia, and the discussion of this agenda in the Turkish public and political discourse in the first decade of the "Justice and Development" Party rule. The aim of this thesis is to identify new approaches in the politics of Turkey and to analyze the reasons for continuity of the Turkish foreign policy toward Armenia in the given period. The approaches and opinions of the Turkish politicians, diplomats, military, analysts, journalists and public figures on the issue of normalization of Armenia-Turkey relations are for the first time comprehensively presented and generalized in the thesis based on the analysis of the public statements of the leading Turkish and Armenian politicians, Turkish, Armenian, Russian and foreign publications (in particular, long-term monitoring of the Turkish media), researches and assessment of the analytical materials.

The thesis consists of Introduction, three chapters (nine paragraphs), Conclusion, and References.

Introduction substantiates the relevance of the topic and its novelty, scientific and practical importance of the research, identifies the main goals and objectives, methodology and chronological framework, provides an overview of the references.

The first chapter of the thesis entitled **"Problems of settling relations between Turkey and Armenia after the proclamation of independence of the Republic of Armenia"** consists of three parts. The first part: **"Intergovernmental relations between Turkey and Armenia in the 1990s"** relates to the prehistory of setting by Turkey of preconditions for establishing diplomatic relations with Armenia. The second part: **"The "Armenian cause" in the socio-political discourse in modern Turkey"** analyzes the set of problems traditionally referred to in the Turkish public and political opinion as the Armenian cause, and reasons for denying the fact of the Armenian Genocide. The third part: **"Problems of Nagorno-Karabakh conflict in the context of the Armenian-Turkish relations"** reveals the impact of the Karabakh

conflict on the Armenian-Turkish dialogue in terms of normalizing the relations, and identifies the tendentious pro-Azerbaijani position of the Turkish elite.

The second chapter entitled **"The attempts of dialogue between Turkey and Armenia in 2001-2007"** also consists of three parts. The first one: **"Attempts of a diplomatic and public dialogue aimed at settling the Armenian-Turkish relations and their impact in the Turkish public and political opinion"** analyzes the results of the Armenian-Turkish Reconciliation Commission, diplomatic efforts made by the Foreign Ministers of the two countries, as well as lifting of the "taboo" in inner Turkish discussions with respect to the Armenian cause. The second part: **"A new wave of attempts to establish Armenian-Turkish relations"** studies the public response to the letter of Prime Minister R. T. Erdogan to Armenian President R. Kocharyan and his reply, and creation of favorable background for the normalization of bilateral relations conditioned by the talks on Turkey's accession to the EU and the development of the Armenian Eurointegration policy within the framework of "New Neighborhood". The third part - **"Trade and economic relations between Armenia and Turkey in the absence of diplomatic relations and closed borders"** investigates the dynamics and scope of economic and trade relations, and the insufficient degree of their influence on decision-making to normalize the Turkish-Armenian relations.

The third chapter of the thesis: **"A new attempt to establish the fundamental relations between Armenia and Turkey (2008-2011)"** consists of three parts. The first part: **"A new initiative aimed at normalizing relations with Turkey and its impact in the internal Turkish political discourse"** studies the development of "Football diplomacy" and its echoes in the Turkish media. It shows the failure of the Turkish initiative to create the "Caucasus platform". The second part: **"Socio-political opinion on the issue of Turkey's ratification of the Zurich Protocols"** contains the analysis of the mode of consolidating Turkey's position on the preconditions and the role of Azerbaijan's influence on the process of ratifying the above Protocols. The third part: **"The Armenian arguments for freezing the process of the Armenian-Turkish relations"** is of summarizing nature. It refutes Turkey's attempts to lay the responsibility for suspending the ratification of the Zurich Protocols, and reveals the official Armenian position expressed in the public statements of the President of Armenia S. Sargsyan and Foreign Minister E. Nalbandyan.

Conclusion summarizes the main results of the thesis.